The First World War, The Armenian Genocide And The Turkish Military Tribunal's Prosecution of the Authors of the Armenian Genocide

By
Edic Baghdasarian
(Ed. Germanic)

Armenian Research Center

Էդիկ Բ. Բաղդասարյան

Առաջին Համաշխարհային Պատերազմը Հայոց Ցեղասպանությունը և Թուրքական ռազմական դատարանի կողմից Հայոց ցեղասպանության հեղինակների դատավարությունը

Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոն

Էդիկ Բ. Բաղդասարյան

Առաջին Համաշխարհային Պատերազմը
Հայոց Ցեսապանությունը
և
Թուրքական ռազմական դատարանի կողմից Հայոց ցեղասպանության հեղինակների դատավարությունը

Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոն
ISBN: 978-1-990573-14-9
www.Edic-Baghdasarian.com
Տորոնտո – 2023 - Կանադա

Բովանդակություն

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 5
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ 18
ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ 26
Նախաբան 26
1- Ովքեր են հայերը 27
2-Ովքեր են թուրքերը 28
3-Հայերի դերը Օսմանական Թուրքիայում 29
4-Հայկական կոտորածների պատմությունից 32
5- Մեծ եղեռն 33
6-Մեծ եղեռնի դրդապատճառները և պատասխանատուները 38
7-Հայկական վրեժխնդրության պատմությունից 41
8-Հայոց ցեղասպանության ճանաչման ընթացքը 43
8-1- Անմիջական արձագանքներ 43
8-2- Պաշտոնական ճանաչումներ 44
8-3- Հայտարարություններ ցեղասպանության համատեքստում ու ցեղասպանության շուրջ 50
9-Վերջաբան 54
«ԱՆԱՎԱՐՏ ՆՅՈՒՐՆԲԵՐԳ». ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 56
Մեղադրյալների ցուցակ 65
Հեռակա կարգով դատի տրված մեղադրյալներն էին. 82
Դատարանում ներկա գտնվող մեղադրյալներ՝ 83
ՍՏԱՆԲՈՒԼԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԸ 85

Առաջաբան 85
Ներածություն 87
Ռազմական տրիբունալ 93
Յոզղաթի դատավարության շարքը 100
Տրապիզոնի շարքը 117
Պատասխանատու քարտուղարների շարքը 124
Պատերազմի ժամանակաշրջանի նախարարների խորհրդի և լավագույն առաջնորդների շարքը 130
Հետգրություն և եզրակացություն 146
Ծանոթագրություններ 154
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 163
Հավելված Ա 165
Հավելված Բ 168
ՎԵՐՋ 181

Երկու խոսք

Առաջին համաշխարային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցավ մարդկության մեծագույն ողբերգություններից մեկը։ Իշխանության գլուխ անցած ազգայնամոլ «Երիտասարդ Թուրքերի» կուսակցությունը կազմակերպեց հայերի անօրինակ ցեղասպանություն և ծխացող անապատի վերածեց ամբողջ Արևմտյան Հայաստանը։

Արևմտահայերի զանգվածային ջարդերի քաղաքականությունը, սակայն, սկիզբ առավ դեռևս XIX դարի վերջերին։ Դաժան ու նենգ սուլթան Աբուլ Համիդը միայն 1890-ական թթ. սրի քաշեց շուրջ 300,000 մարդ։ 1909 թ. Կիլիկիայի Ադանա քաղաքի հայ բնակչության զոհերի թիվը կազմեց մոտ 30,000 ։ Ուստի, երբ խոսք է լինում Մեծ եղեռնի մասին, ապա պետք է նկատի ունենալ ոչ միայն 1915 - 1916 թթ. համընդհանուր կոտորածը, այլև XIX դարի վերջերի և XX դարի սկզբի զանգւածային ջարդերը թե Արևմտյան Հայաստանում, այսպես կոչված Թուրքիայում և Ադրբեջանում[1]*։*

Որքան է եղել Մեծ եղեռնի զոհերի ընդհանուր թիվը։ Հարցի ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության,

---

1 - Մանրմասնությունները տեսնել մեր «Հայոց Ցեղասպանության Պատմության» աշխատությունը, Ցավոք մեր հայ և օտարազգի պատմաբանները խոսելով Հայոց ցեղասպանության մասին ակնարթող են արել հայկական զանգվածային կորոտածները նաև Ադրբեջան կոչվող հանրապետությունեւմ 1918-1988 թթ.- Մեն սույն գրքում ներկայացրել եմ բոլոր նշվածները: www.Edic-Baghdasarian.com.

որ կոտորածների զոհ են դարձել մոտ 1.5 միլիոն մարդ։ Շուրջ 700 հազար փախստականներ ապաստան են գտել Կովկասում, Արաբական արևելքում, Հունաստանում և այլ երկրներում։

Հարկ է նշել, որ, չնայած խիստ անբարենպաստ պայմաններին, հայերը 1915-1918 թթ. շատ անգամ հանդես են եկել իրենց դահիճների դեմ, հաճախ դիմել են ինքնապաշտպանության և զենքը ձեռքներին պայքարել իրենց կյանքի ու պատվի համար։ Անձնուրաց քաջությամբ է պաշտպանվել Վանի, Շատախի, Շապին-Գարահիսարի, Ուրֆայի, Մուշի, Սասունի և մի շարք այլ քաղաքների ու վայրերի բնակչությունը։ Հաջողությամբ պսակվեց հատկապես Վան քաղաքի ինքնապաշտպանությունը, որը տևեց մոտ մեկ ամիս՝ շնորհիվ ժողովրդի հերոսական պայքարի և ռուսական Կովկասեան բանակի օգնության, որի կազմում կային և հայ կամաւորական ջոկատներ, տասնեակ հազարավոր վանեցի հայեր փրկվեցին իրենց սպառնացող կոտորածից։ Հաջող ավարտվեց նաև Անտիոքի շրջանի հայերի ինքնապաշտպանությունը Մուսա լեռան (Մուսա դաղ) վրա, որտեղ վատ զինված գյուղացիները մոտ քառասուն օր խիզախորեն մարտնչում էին հարձակվող թուրքական զորքերի շատ ավելի գերակշիռ ուժերի դեմ (հերոսական այդ իրադարձությունները տաղանդաւոր կերպով վերարտադրված են ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հայտնի վեպում)։ Սակայն հայերի ինքնապաշտպանությունը մեծ մասամբ, ուժերի անհավասարության պատճառով, պարտության մատնվեց։

Արևմտահայերի զանգվածային կոտորածների քաղաքականությունը եղել է ցեղասպանության քաղաքականություն, որն անողոքաբար իրագործվում էր Թուրքիայի, կառավարող շրջանակներրի կողմից։ Այն, ինչ տեղի ունեցաւ մասնավորապես 1915 թ., եղել է չտեսնւած բարբարոսություն, կարելի է ասել՝ առաջին ցեղասպանությունը ժողովուրդների պատմության մեջ։ Իրավացի էր Հ. Մորգենթաուն, երբ գրում էր. «Ես վստահ եմ, որ մարդկության համայն պատմության մեջ չկան այնպիսի զարհուրելի փաստեր, ինչպիսին այս կոտորածն էր։ Այն մեծ կոտորածներն ու հալածանքները, որոնք տեղի են ունեցել անցյալում, համարյա աննշան բան են թվում հայ ազգի 1915 թ. կրած տառապանքների հետ համեմատած»։

Ի՞նչ դիրք բռնեցին մեծ տերությունները հայ ժողովրդի ապրած ահավոր ողբերգության նկատմամբ։

Կայսերական Գերմանիան՝ Թուրքիայի «դաշնակիցը», խրախուսում և պաշտպանում էր երիտթուրքերի հանցավոր ծրագրերը և գործողությունները։

Անտանտի տերությունները, որոնք հայ ժողովրդին իրենց դաշնակիցն էին համարում, չձեռնարկեցին գործուն քայլեր հայ ժողովրդին փրկելու համար։

Իսկ ԱՄՆ-ը, որն այդ թվականին դեռևս չեզոք երկիր էր, չարեց նույնիսկ պատշաճ հայտարարություն։ Չնայած հասարակական մի շարք գործիչների և պաշտոնական անձանց բողոքներին, ամերիկյան կառավարությունը միջոցներ չձեռնարկեց բարբարոսներին սանձահարելու ուղղությամբ։

Հայ ժողովրդի ցեղասպանության դեմ հանդես եկավ առաջադէմ հասարակայնությունը։ Յասումնալի բողոք արտահայտեցին Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը և Յուրի Վեսելովսկին Ռուսաստանում, Անատոլ Ֆրանսը և Ռոմեն Ռոլանը՝ Ֆրնսիայում, Ջեյմս Բրայսը՝ Անգլիայում, Ֆրիտիոֆ Նանսենը՝ Նորվեգիայում, Կարլ Լիբկնեխտը, Հովհաննես Լեփսիուսը, Յոզեֆ Մարկվարտը, Արմին Վեգները՝ Գերմանիայում և առաջադեմ ուրիշ շատ գործիչներ՝ աշխարհի գրեթե բոլոր երկրներում։ Բայց այդ ազնիվ մարդկանց ձայնը խորթ ու անհասկանալի մնաց ջարդարարների համար։ Երիտթուրքերը շարունակեցին իրենց սև գործը։

Թվում էր, թե եկել էր հայ ժողովրդի վերջը։ Բայց որքան էլ դաժան ու անողոք լիներ թշնամին, այնուամենայնիվ, նա չկարողացավ ընկճել մեր ժողովրդի ոգին ու կամքը, չկարողացավ իրականացնել իր դիվային ծրագիրը։

Մեծ եղեռնից երեք տարի անց, 1918 թվականին, պետականության վեցդարյա բացակայությունից հետո, հիմք դրվեց Հայաստանի առաջին Հանրապետությանը (19218-1920), որին փոխարինեց երկրորդը՝ Խորհրդային Հայաստանը(1920-1991),ապա հռչակվեց Հայաստանի երրորդ Հանրապետությունը (1991 թ. սեպտեմբեր 21), որոնց շնորհիվ հայ ժողովուրդը հպարտորեն կանգնել է աշխարհի միւս պետութիւնների և ժողովուրդների կողքին, բացառությամբ 2018 թվականից հետո Արևմուտքի սև ուժերի միջոցով իշխանության եկաց բողոցային լկտի ազգային դավաճանների սև գործի արդյունքում համայն հայ ժողովուրդը կրկին օրհասակա պահեր է ապրում ։

Այսօր, խոսելով հայկական ցեղասպանության և հայկական հարցի մասին , հարկ ենք համարում խորհել նաև դրա վերջնական լուծման մասին։ Ինչպես էլ մտածենք, հայ ժողովրդի նկատմամբ տեղի ունեցած և դրանց հետևանքներն ու ազդեցությունները շարունակվող վայրագությունների ու հալածանքներին հատուցում տալու համար ներքոհիշյալ պահանջներին դրական մոտեցումը առաջին հերթին Թուրքիայի, ապա միջազգային շրջանակների կողմից անհրաժեշտ է.

1-Հայոց Ցեղասպանութեան պաշտոնական ճանաչում մեծ երկրների օրենսդիր և գործադիր իծանությունների կողմից։

2-Հայաստանին և Սփյուռքին ճանաչել որպես հայկական հարցի ժառանգորդ և իրավական կողմ։

3-ՀՀ-ին վերադարձնել հայկական հողերը, ըստ միջազգային կնքված դաշնագրերի։

4-Տնտեսական վնասների փոխհատուցում։

5-Օժանդակել Արևմտյան Հայաստանում վերանորոգել ու պահպանել հայկական մշակութային ու կրոնական հուշարձանները։

Սրանք, Հայ ժողովրդի նվազագույն սպասելիքներն են աշխարհի պատմութեան մեջ ամենադաժան ցեղասպանությանը հատուցում տալու համար։

Սոյն գրքում, տալիս ենք Առաջին համաշխարհային պատերազմի համառոտ պատմությունը, դրվագներ հայոց ցեղասպանության պատմությունից, երիտթուրքերի դատավարության պատմությունը՝ Անավարտ Նյուրենբերգը, ապա

ցեղասպանագետ հանգուցյալ Վահագն Ն. Տատրյանի հոդվածի հայերեն մեր թարգմանությունը նվիրված Երիտթուրքերի ստամբուլյան զինվորական դատարանի դատավարությունը, վերջում ներկայացրել ենք այդ դատավարությունների արխանագրությունը թուրքական ժամանակակից «Թաքվիմ-ի վաքայի» ամսաթերթի էջերը։

Երիտթուրքերի դատավարություն (1919-1920), Օսմանյան կայսրությունն առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշած և հայերի տեղահանությունն ու ցեղասպանությունը կազմակերպած երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավար գործիչների դատավարությունն է Կ. Պոլսում։ Մուդրոսի զինադադարի (1918) կնքումից անմիջապես հետո, համաշխարհային հասարակայնության ճնշման տակ, թուրքական նոր կառավարությունը որոշեց պատասխանատվության ենթարկել Թուրքիան պատերազմի մեջ ներքաշած և հայերի ցեղասպանությունը կազմակերպած մեղավորներին։

1918 թ. դեկտեմբերի 16-ի որոշմամբ կազմվեցին արևմտահայության կոտորածներին վերաբերող մեղադրական ապացույցներ (ծածկագիր հեռագրեր, պաշտոնական գրություններ, հրահանգներ և հրամաններ, ականատեսների վկայություններ և այլն) հավաքող հարցաքննիչ հանձնախմբեր։ Օսմանյան կայսրության տարածքը բաժանվեց 10 դատաքննչական շրջանի, նշանակվեցին դատախազներ, քննիչներ, քարտուղարներ։ 1919 թ. հունվարի 8-ին կազմվեցին ռազմական արտակարգ ատյաններ։ Դատական նիստերի ընթացքում քննվեց երիտթուրքական կառավարության ղե-

կավարների, «Միություն և առաջադիմություն» կուսակցության ԿԿ անդամների և շրջանային պատասխանատու քարտուղարների ու պաշտոնյաների, հայկական կոտորածներն իրականացնող «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի («Հատուկ կազմակերպություն), Յոզղատի, Տրապիզոնի, Բյոյուքդերեի (Կ. Պոլսի արվարձան) և Խարբերդի տեղահանությունն ու կոտորածները կազմակերպողների հանցավոր գործունեությունը։

Երիտթուրքերի դատավարությունը ցույց տվեց, որ արևմտահայության տեղահանություններն ու կոտորածները ռազմական կամ կարգապահական միջոցառումներ չէին և սահմանափակ կամ տեղական բնույթ չէին կրել, ինչպես ցանկանում էին ներկայացնել հանցագործները, այլ եղել են կանխամտածված ու մշակված գործողություններ, իրականացվել բացարձակապես երիտթուրքական կուսակցության ԿԿ նախաձեռնությամբ ու կարգադրությամբ, իսկ կոտորածներն անմիջականորեն իրականացրել են այդ նպատակով բանտերից ազատ արձակված մարդասպաններն ու այլ ոճրագործներ։

Երիտթուրքերի կուսակցության պարագլուխների ու նախարարների դատավարությունը սկսվեց 1919 թ. ապրիլի 27-ին և ընդհատումով (մայիսի 28-ին անգլիական հրամանատարությունը 77 հոգու անսպասելիորեն աքսորեց Մալթա կղզի և դրանով ընդհատեց դատաքննությունը) շարունակվեց մինչև հունիսի 26-ը (13 նիստ)։ Դատավճիռը հրապարակվեց 1919 թ. հուլիսի 5-ին։ 31 հանցագործներից 4-ը՝ Թալաաթը, Էնվերը, Ջեմալը և Նազիմը, հեռակա կարգով դատապարտվեցին մահվան, իսկ մնացած 27-ից ոմանք՝ տար-

բեր տարիների ազատազրկման, ոմանք արդարացվեցին հանցանշանների բացակայության պատճառով։ Դատավճռում մոռացության մատնվեցին անգլիացիների՝ Մալթա աքսորած հանցագործները։

1919 թ. հունիսի 21-ին, 23-ին և 29-ին տեղի ունեցան «Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների և պաշտոնատար այլ անձանց դատավարությունները։ Դատավճիռը հրապարակվեց 1920 թ. հունվարի 8-ին։ 36 մեղադրյալներից 3-ը դատապարտվեցին 10 տարվա, մյուսները՝ մի քանի տարվա ազատազրկման։

Յոզղատի հայերի կոտորածն իրականացնողների դատավճիռը հրապարակվեց 1919 թ. ապրիլի 8-ին. Յոզղատի մութասարիֆի (գավառապետ) տեղակալ և Բողազլյանի կայմակամ (գավառապետ) Քեմալ բեյը դատապարտվեց մահվան, իսկ Յոզղատի ոստիկանապետ Թեվֆիկ բեյը՝ 15 տարվա տաժանակրության։

Տրապիզոնի կոտորածներն իրականացնողների դատավճիռը կայացվեց 1919-ի մայիսի 22-ին։ 8 հանցագործներից երկուսը՝ Ջեմալ Ազմի և Նայիմ բեյերը, հեռակա կարգով դատապարտվեցին մահվան, մյուսները՝ տարբեր ժամկետներով ազատազրկման։

Բյոյուքդերեի ոչ մուսուլման բնակչության՝ հայերի և հույների հալածանքները կազմակերպողների դատավճիռը հրապարակվեց 1919 թ. մայիսի 24-ին։ Բոլոր մեղադրյալները (4 հոգի) դատապարտվեցին մի քանի տարվա ազատազրկման։

Խարբերդի հայերի տեղահանության և կոտորածների հանցագործների դատավճիռը կայացվեց 1920 թ. հունվարի 14-ին. Բեհաեդդին Շաքիրը հեռակա կարգով դատապարտվեց մահվան, իսկ երիտթուրքական կուսակցության Խարբերդի պատասխանատու քարտուղար Ռեսնելի Նազիմ բեյը՝ 15 տարվա տաժանակրության։

Դատավարության արձանագրությունները հրատարակվել են 1919-20 թթ., «Թաքվիմ-ի վեքայի» («Իրադարձությունների օրացույց») արաբատառ թուրքական պաշտոնաթերթի հավելվածում։ Երիտթուրքերի դատավարությունը թեև չտացավ լայն արձագանք, այնուամենայնիվ բացահայտեց Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում թուրքական իշխանությունների իրագործած հայերի ցեղասպանությունը։ Երիտթուրքերի դատավարության նյութերը հերքում են թուրքական պաշտոնական շրջանների՝ հայերի ցեղասպանությունը ժխտող պնդումները։

Ցեղասպանագետ Վահագն Տատրյանն ու ուրք պատմաբան Թաներ Աքչամը իրենց մենագրության եր մանրամասնորեն ներկայացրե եմն ադ դատավարությունը։

«Դատավարություն Ստամբուլում» գիրքը տպագրվել է Թուրքիայում 2008թ. և 2010 թ. Բիլգի համալսարանի կոզմից։ 2011թ.-ին իրականացվել է գրքի անգլերեն լեզվով տպագրությունը։ Հետազոտությունը նվիրված է 1915թ. հայերի կոտորածների դեպքերը հետաքննելու համար ստեղծված հատուկ ռազմական տրիբունալի գործունեության ուսումնասիրությանը։ 1919-ի գարուն-ամառվա ընթացքում տրիբունալում չորս լսումներ անցկացվեցին, որոնց արդյունքում կայացվեցին տարբեր ծանրության մի քանի տասնյակ մեղադրական եզրակացություններ (այդ թվում՝ 18 մահվան դատավճիռ, որոնցից միայն երեքն ի կատար ածվեց)։ 1920-ին սկսվեց ևս յոթ լսումների նախապատրաստությունը։ Սակայն 1920թ. օգոստոսի 11-ին Թուրքիայում իշխանության եկած քեմալական կառավարությունն ազատ արձակեց տրիբունալը։



Գրքի առաջին մասում (1-9 գլուխներ), որ գրված է Վ. Տատրյանի կողմից, ուսումնասիրվում են 1915 թվականի ցեղասպանության դատավարությունների տարբեր ասպեկտներ։ Ինչպես նշվում է ուսումնասիրության մեջ, ամբաստանյալներին ներկայացվող հիմնական մեղադրանքը հայ ազգաբնակչության մասսայական կոտորածների կազմակերպումն էր։ Դրան հավելվում էին լրացուցիչ մեղադրանքներ՝ զոհերի ունեցվածքը կողոպտելու և յուրացնելու, բռնաբարության, խոշտանգման, դիակները ծաղրի ենթարկելու, և այլն։

Գրքի երկրորդ մասը, որի հեղինակն է Թաներ Աքչամը, ծավալով ավելի փոքր է և բաղկացած է չորս գլխից։ Գիրքը ներառում է տրիբունալի կայացրած 18 մահապատժի դատավճիռների համառոտ նկարագրությունը, Հայոց ցեղասպանության դատավարությունների՝ թուրքական մամուլում լուսաբանման վերլուծությունը, տրիբունալների աշխատան-

քի և նախարարների կաբինետի փոփոխության միջև հարաբերությունների վերլուծությունը, մեղադրական եզրակացությունների և դատավճիռների ամբողջական թարգմանությունները։

Վահագն ՏաՏրյան, Թաներ Աքչամ. «Դատավճիռ Ստամբուլում. Հայոց ցեղասպանության դատավարություններ» /Վահագն Դադրյան, Թաներ Աքչամ, թարգմանություն անգլերեն լեզվից, Հայագիտական ուսումնասիրությունների զարգացման և աջակցության «Անիվ» հիմնադրամ. Մոսկվա, «Արկ մեդիա» հրատարակչություն, 2020թ. 400 էջ:

Տատրյանի և Աքչամի գրքի հրատարակումը ռուսերեն լեզվով շատ արդիական է։ Ցույց է տրված, որ ցեղասպանության կազմակերպիչն ու հիմնական մեղավորը «Միասնություն և առաջընթաց» կուսակցությունն է, իսկ ոճիրը

հնարավոր դարձավ կուսակցության և նախարարների կաբինետի միաձուլման արդյունքում։ Ինչպես ընդգծում են ուսումնասիրության հեղինակները, 1918-1920 թթ. Զինվորական հատուկ տրիբունալը թուրքական պատմության մեջ առաջին անգամն էր, երբ թուրքական դատարանը դատեց պետական բարձրաստիճան պաշտոնյաների ազգային հանցագործության մեջ և դատապարտեց, և ոչ թե՝ միջազգային, այլ օսմանյան քրեական օրենսդրությամբ։ Այդ եզրակացությունը նշանակում է՝ Հայոց ցեղասպանության փաստացի ընդունում հենց Օսմանյան պետության կողմից դեռ 1919թ.։

Ուսումնասիրությունը կատարվել է բարձր մեթոդոլոգիական մակարդակում և հիմնվել է նշանակալի ծավալի աղբյուրների և պատմագիտական աշխատանքների վերլուծության վրա, ներառյալ՝ արխիվային փաստաթղթերն ու մամուլի հրապարակումները։

Էդիկ Բաղդասարյան

Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոն

Ապրիլի 24, 2023թ.

Տորոնտո, Կանադա